

վաստակէի: Աստուած չէն պահէ Սաամպօլ ժողովուրդն եւ զքահանայս զի այն ամն ժողովեցի ութսուն զուրուշ» (էջ 210):

1615, Յունիսին կ'աւարտէ հոս Շարակնոցի մ'օրինակութիւնը<sup>6</sup>: Յիշատակարանն է.

«Շնորհիւ Տեառն սկսայ եւ սղորմութեամբ նորին յանգ ելեալ կատարեցի զԵրզւարականց... որում ցանկացեալ եղեւ բարեմիտ եւ ուսումնասէր... տէր Յովհաննէս քահանայն Կամախեցի... այլ եւ ընդ նմին յիշեսջիք զհամեստ եւ զաստուածասէր կրանաւորս պարկեշտս որ օգնեցին արօք այս սուրբ ձայնաբաղիս...: Բայց զբեցաւ սա ի թուին Հայոց ՌԿԴ ամի եւ ի ամսեանն Յունիսի, ի կայսերանիստ մեծահամբաւ քաղաքն Կ. Պոլիս, որ այժմ կոչի Սաամպօլ, ի դուռն Սրբոյն Նիկողայոսի սքանչելագործ Հայրապետին, ի թաղն Վլանկու. ձեռամբ ապիկար եւ անարուեստ զբշիս Սիմէոնի, զոր տկար եւ փանաքի մտօք... մոլոր եւ ցրիւ եւ անարժան մատամբ նօտրեցի: Մոխրամած զիմօք երես անկեալ աղաչեմ զհանգիստողսգ այսմ տառիս, սղալանացն ներել եւ զպակասն ընուլ, վասն պանդխտութեան եւ զարիպութեան զմիտս ցնորեալ էր եւ զխելս մերժեալ»:

1615 Օգոստոս 15ին ուխտաւորներու հետ

<sup>6</sup> Թորգոմ եպ. Գուշակեան՝ Յուցակ հայերէն ձեռագրաց Ս. Նշանի Վանուց ի Սերասաիա, Թ. 123: Տես վարը, էջ 391—392: